

« 15 » մայիս 2019 թ No 1231 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 18 ԱՄՍԱԿԱՆԻՑ 4 ՏԱՐԵԿԱՆ 11
ԱՄՍԱԿԱՆ 29 ՕՐԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏԻ
ԵՐԿՎԱԼԵՆՏ ԲԵՐԱՆԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏԻ
ԴԵՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆԲԱՐԵՀԱԶՈՂ ԴԵՊՔԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄԵՆՕՐՅԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի հունիսի 14-ի N1384-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում պոլիոմիելիտի, կարմրուկի, կարմրախտի և բնածին կարմրախտային համախտանիշի վերացման փաստագրման և վկայագրման ազգային հանձնաժողովի» առաջարկությունը (2019 թվականի ապրիլի 10-ի նիստի արձանագրություն), Հայաստանի Հանրապետությունում վեցավալենտ (ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ) պատվաստումների փուլային ներդրման և կենդանի պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութից ինակտիվացված պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութի անցման փուլում համաճարակաբանական ցուցումով պոլիոմիելիտի դեմ լրացուցիչ պատվաստումներով երեխաների շրջանում պոլիոմիելիտի նկատմամբ անընկալության ամրապնդման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի մայիսի 20-ից հունիսի 30-ն ընկած ժամանակամիջոցում 18 ամսականից 4 տարեկան (4 տարեկան 11 ամսական 29 օրական) երեխաների շրջանում կազմակերպել և իրականացնել պոլիոմիելիտի երկվալենտ բերանային պատվաստանյութով (այսուհետ՝ ՕՊՊ) լրացուցիչ պատվաստումներ:

(1-ին կետը փոփոխվել է ԱՆ 21.06.2019թ. N1679-Ա հրամանով)

2. Հաստատել.

1) «Պոլիոմիելիտի դեմ լրացուցիչ պատվաստումների և անբարեհաջող դեպքերի վերաբերյալ ամենօրյա տեղեկատվության ձևը»՝ համաձայն հավելվածի:

3. Առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ Կարինե Սարիբեկյանին, Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ) գլխավոր տնօրեն Արտավազ Կանյանին, «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի խորհրդական, Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար Գայանե Սահակյանին՝ սահմանված կարգով.

1) Ապահովել Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի մայիսի 20-ից հունիսի 30-ն ընկած ժամանակամիջոցում՝ 18 ամսականից 4 տարեկան (4 տարեկան 11 ամսական 29 օրական) երեխաների շրջանում պոլիոմիելիտի երկվալենտ բերանային պատվաստանյութով լրացուցիչ պատվաստումների կազմակերպումը և իրականացումը հետևյալ երեխաների շրջանում՝

(3-րդ կետի 1-ին ենթակետը փոփոխվել է ԱՆ 21.06.2019թ. N1679-Ա հրամանով)

ա. Չպատվաստված և թերի պատվաստումային կարգավիճակ ունեցող (1 դեղաչափ ՕՊՊ, 2 դեղաչափ ՕՊՊ, 3 դեղաչափ ՕՊՊ) երեխաներ՝ ապահովելով ՕՊՊ նվազների թիվն ըստ Պատվաստումների ազգային օրացույցի,

բ. Համակցված հնգավալենտ (ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ) և բերանային ՕՊՊ պատվաստանյութերով չորրորդ դեղաչափ պատվաստումների փոխարեն համակցված վեցավալենտ (ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ) պատվաստանյութով պատվաստված երեխաներ:

գ. Առնվազն 4 դեղաչափի ՕՊՊ պատվաստում չունեցող 18 ամսականից 36 ամսական երեխաներ, ովքեր ունեն առնվազն մեկ դեղաչափի ինակտիվացված պոլիոմիելիտի դեմ պատվաստում (այսուհետ՝ ԻՊՊ), ԻՊՊ պատվաստում չունենալու դեպքում ապահովել նաև առնվազն մեկ դեղաչափի ԻՊՊ-ի իրականացումը:

դ. Առնվազն 5 դեղաչափի ՕՊՊ պատվաստում չունեցող 36 ամսականից 4 տարեկան 11 ամսական 29 օրական երեխաներ:

2) Ապահովել ՕՊՊ պատվաստանյութով լրացուցիչ պատվաստումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ հանրային իրազեկումը:

3) Իրականացնել ամենօրյա մշտադիտարկում 2019 թվականի մայիսի 20-ից հունիսի 30-ն ընկած ժամանակամիջոցում ՕՊՊ լրացուցիչ պատվաստումների գործընթացի նկատմամբ, ամփոփել և ներկայացնել ՕՊՊ պատվաստումների և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն հավելվածի:

(3-րդ կետի 3-րդ ենթակետը փոփոխվել է ԱՆ 21.06.2019թ. N1679-Ա հրամանով)

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել.

1) Սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

2) ՕՊՊ պատվաստանյութով լրացուցիչ պատվաստումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ հանրային իրազեկումը:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների գլխավոր քարտուղարներին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին՝ ապահովել.

1) Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի մայիսի 20-ից հունիսի 30-ն ընկած ժամանակամիջոցում՝ 18 ամսականից 4 տարեկան (4 տարեկան 11 ամսական 29 օրական) երեխաների շրջանում պոլիոմիելիտի երկվալենտ բերանային պատվաստանյութով (այսուհետ՝ ՕՊՊ) լրացուցիչ պատվաստումների կազմակերպումը և իրականացումը հետևյալ երեխաների շրջանում՝

(5-րդ կետի 1-ին ենթակետը փոփոխվել է ԱՆ 21.06.2019թ. N1679-Ա հրամանով)

ա. Չպատվաստված և թերի պատվաստումային կարգավիճակ ունեցող (1 դեղաչափի ՕՊՊ, 2 դեղաչափի ՕՊՊ, 3 դեղաչափի ՕՊՊ) երեխաներ՝ ապահովելով ՕՊՊ նվազների թիվն ըստ Պատվաստումների ազգային օրացույցի,

բ. Համակցված հնգավալենտ (ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ) և բերանային ՕՊՊ պատվաստանյութերով չորրորդ դեղաչափի պատվաստումների փոխարեն համակցված վեցավալենտ (ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ) պատվաստանյութով պատվաստված երեխաներ:

գ. Առնվազն 4 դեղաչափի ՕՊՊ պատվաստում չունեցող 18 ամսականից 36 ամսական երեխաներ, ովքեր ունեն առնվազն մեկ դեղաչափի ինակտիվացված պոլիոմիելիտի դեմ պատվաստում (այսուհետ՝ ԻՊՊ), ԻՊՊ պատվաստում չունենալու դեպքում ապահովել նաև առնվազն մեկ դեղաչափի ԻՊՊ-ի իրականացումը:

դ. Առնվազն 5 դեղաչափի ՕՊՊ պատվաստում չունեցող 36 ամսականից 4 տարեկան 11 ամսական 29 օրական երեխաներ:

2) ՕՊՊ պատվաստանյութով լրացուցիչ պատվաստումների և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերաբերյալ ամենօրյա տեղեկատվության ներկայացումը «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ին՝ համաձայն հավելվածի:

3) ՕՊՊ պատվաստանյութով լրացուցիչ պատվաստումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ հանրային իրազեկումը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ԹՈՐՈՍՅԱՆ

ՁԵՎ
 ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏԻ ԴԵՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ
 ԱՆԲԱՐԵՀԱՋՈՂ ԴԵՊԲԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄԵՆՕՐՅԱ
 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ԲՕՍԻԿ-ի անվանում	*Ենթա կա երեխա ների թիվ	*Պատվաստում ստացած երեխաների թիվ՝ ըստ օրերի					**ՀԱԴ		ՕՊՊ-ի մնացորդ
							Թեթև	Ծանր	

*Ներկայացվում է պատվաստման ենթակա երեխաների թիվը և նրանցից տվյալ օրը պատվաստում ստացած երեխաների թիվը

**Ներկայացվում է ՀԱԴ-երի (հետպատվաստումային անբարեհաջող դեպքեր) թիվը, այդ թվում՝

Թեթև՝

Ընդհանուր՝ ջերմության բարձրացում, փսխում, դիարեա

Ծանր՝

ՊԱՊ (պատվաստանյութ ասոցացված պոլիոմիելիտ), ՇՊԱՊ (չրջանառվող պատվաստանյութ– ազգակցական պոլիոմիելիտ):